

## Շահանե ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Հայաստանում ֆրանսիական քողեղ» հիմնադրամ

### «ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում է «դարձվածաբանական միավոր» հասկացության հեղինակի ըմբռնումը, ըստ որի տարբերակում է մտցվում «դարձվածք» և «դարձվածաբանական միավոր» եզրույթների միջև։ Ծեշտվում է դարձվածքի առանձին տեղը դարձվածաբանական մյուս միավորների՝ առածների, ասացվածքների, թևավոր խոսքերի, մաղթանքների և օրինանքների շարքում։ Սույն մոտեցումը հիմնվում է այն իրողության վրա, որ հիշյալ լեզվամիավորներից յուրաքանչյուր այս կամ այն շափով օժնված է պատկերավորությամբ, փոխարերական-այլարերական իմաստով, հուզագույնական երանգավորմամբ և արտահայտչականությամբ։

**Քանակի բառեր.** դարձվածք, դարձվածաբանական միավոր, պատկերավորություն, փոխարերական-այլարերական իմաստ, հուզագույնական երանգավորում, արտահայտչականություն

Ֆրանսիական ժողովրդական բանահյուսության կարևոր բաղադրիչներից մեկը դարձվածաբանական միավորներն են։ Բոլոր ժողովուրդների մոտ էլ գրավոր խոսքին նախորդել է բանավոր խոսքը, որը հարատևել է կա'մ մինչև սեփական այրութենի ստեղծումը, կա'մ էլ օտարալեզու գրի փոփոխումն ու սեփական լեզվին հարմարեցնելը։

Թեև բանահյուսության ակունքները շատ հին են և գնում են դարերի խորքը, այդպիսին չեն բանագիտությունը՝ բանահյուսության մասին գիտությունը։ Այն համեմատաբար նոր գիտություն է, որ սկզբնավորվել է 18-րդ դարում։ Ուստի, թեև դարձվածքների զգալի մասը հնագույն ծագում ունի, դրանց մասին գիտությունը ստեղծվել է բավականին ուշ։

Ուշագրավ է, որ դարձվածաբանությունը ամուր հիմքերի վրա դրվեց այն ժամանակ, երբ արդեն հրատարակվել էին ֆրանսիացի հոչակավոր դարձվածաբան Շառլ Բալլիի աշխատությունները։ Շ. Բալլիի մեծագույն ծառայությունը լեզվաբանության մեջ այն է, որ նա առաջինը գիտականորեն հիմնավորեց և համակարգեց ֆրանսերենի կայուն բառակապակցությունները։ Դարձվածաբանության մեջ նրա գիտական ներդրումը մինչ օրս էլ չի կորցրել իր նշանակությունը և հենք է այդ բնագավառում աշխատող գիտնականների համար։

Այսպես, Վ. Վինոգրադովը, որ ուս լեզվաբանության մեջ առաջինն է տվել դարձվածքների հմաստային դասակարգումը, հիմք է ընդունել Շ. Բալլիի տեսությունը, որի հիման վրա դասակարգվել էին ֆրանսերենի դարձվածքները։ Վ. Վինոգրադովը ուսերենում առանձնացնում է դարձվածքների երեք խումբ։  
1) դարձվածային սերտաճումներ, 2) դարձվածային միասնություններ,  
3) դարձվածային կապակցություններ /Վինոգրադով, 1947/։ Հետագայում

Մ. Շանսկու և այլոց կողմից ավելացվեց ևս մեկը՝ «դարձվածային պատահայությունների խումբ» /Շանսկու, 1969: 63/:

Նշենք, որ հայ լեզվաբանական աշխատություններում առաջին անգամ «դարձվածք» եզրը գործածել է Ա. Այտրնեանը՝ իր «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ՝ /Այտրնեան, 1866: 317-320/ դարձվածքներն ընկալելով որպես ոճ: Դարձվածքներին անդրադարձել է նաև անվանի գրականագետ, լեզվաբան, բանագետ Մ. Աբեղյանը, որը դարձվածքները համարում է «քառերի նորիմաստ կապակցություններ», որոնք առաջացել են հարադրական բառերից /Աբեղյան, 1965: 173/: Ա. Մուրվալյանն է, որ իր «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» աշխատության մեջ հիմք է դնում գիտական դարձվածաբանությանը: Ա. Մուրվալյանը տալիս է հայերենի դարձվածքների կառուցվածքային դասակարգումը՝ դրա հիմքում դնելով դարձվածային միավորների խոսքիմաստային պատկանելությունը /Մուրվալյան, 1959/:

Դարձվածաբանությամբ գրադիւն է նաև Պ. Բեղիրյանը: Նա է կազմել «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ը /Բեղիրյան, 2011/ և գրել «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» աշխատությունը /Բեղիրյան, 1973/, որտեղ անդրադարձել է ոչ միայն ժամանակակից հայ դարձվածաբանությանը, այլև անհրաժեշտությունից ելնելով՝ հին և միջնադարյան շրջանին: Տիրապետելով տարբեր լեզուների՝ համեմատության մեջ է դրել հայ և օտարազգի դարձվածաբանական իրողություններ, կատարել համեմատություններ: Ժամանակակից դարձվածաբանության խնդիրներին են անդրադարձել նաև հայ լեզվաբաններ Խ. Բաղիկյանը, Ս. Աբրահամյանը, Գ. Սևակը, Ալ. Մարգարյանը, Ա. Պապոյանը, Ռ. Իշխանյանը և ուրիշներ:

Հաճախ դժվար է տարբերակել բուն դարձվածքը առածներից, ասացվածքներից, թեավոր խոսքերից, անեծքներից, մաղրանքներից և օրինանքներից, որոնք մեր կողմից դիտվում են դարձվածաբանական միավորների ամբողջությունը կազմող համակարգի բաղկացուցիչ մասեր, քանի որ այս կամ այն շափով օժտված են պատկերավորությամբ, այլարերական իմաստով, հուզազայկան երանգավորմամբ և արտահայտչականությամբ: Իսկ սա նշանակում է, որ մենք որոշակիորեն տարբերակում ենք «դարձվածք» և «դարձվածաբանական միավոր» հասկացությունները:

Միաժամանակ անժխտելի է, որ դարձվածաբանական միավորների շարքում առանցքային դերը վերապահված է դարձվածքին, որի գուգադրությամբ են բնորոշվում մյուսները: Ֆրանսերենում դարձվածքը հատկապես շատ է նման ոչ դարձվածային կայուն և ազատ կապակցություններին և հիմնականում ամբողջ բառային կազմի ֆոնի վրա է, որ հնարավոր է դառնում տարբերակել դրանք:

Թե ի նշ է դարձվածքը, որոնք են նրա իմաստաբանական ու ձևաբանական հատկանիշները, մասնագիտական գրականության մեջ այս մասին միասնական կարծիք չկա: Որոշ լեզվաբաններ դարձվածքները դիտարկում են իբրև բառակապակցություններ, որոնք ունեն փոխարերական իմաստ, ոմանք դարձվածքներ են անվանում բոլոր կայուն կապակցությունները, թեև որոշ ո՞չ կայուն կապակցություններ նույնապես ներառում են դարձվածքների մեջ, իսկ այլ հետա-

զոտողներ՝ պարզապես ժողովրդի կողմից հորինված ու հաստատված պատրաստի խոսքային միավորներ և այլն: Հայ լեզվաբանության մեջ գտնում ենք դարձվածքի հետևյալ սահմանումները.

«Երկու և ավելի բառերի կայուն կապակցություն, որ ամբողջությամբ արտահայտում է մեկ ընդհանուր գաղափար և ունենում է փոխարերական իմաստ» /Մելքոնյան, Պողոսյան, 1975: VII/:

«Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերահմաստավորված կապակցություն է, որը բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մրագնած» /Բեղիրյան, 1973: 5/:

«Դարձվածքը պետք է համարել փոխարերական-այլարաբանական միասնական իմաստ ունեցող ամեն մի կայուն բառային անքածանելի, պատրաստի վերարտադրելի կապակցությունը» /Զահուկյան և որիշ., 1980: 476/:

«Փոխարերական-այլարաբանական իմաստ ունեցող ամեն մի կայուն բառակապակցություն կոչվում է դարձվածք» /Գևորգյան, 1969: 18/:

Իսկ Ա. Նազարյանը տախս է դարձվածքի հետևյալ սահմանումը՝ միաժամանակ նշելով վերջինիս ընդհանուր բնույթը. «Դարձվածքը լեզվի տարակազմ միավոր է, որին բնորոշ է բաղադրիչների ամբողջական կամ մասնակի վերահմաստավորումը» /Հազարյան, 1987: 42/:

Թեև դարձվածքների սահմանման, դրանց յուրահատկությունների ընկալման հարցում տարբեր են գիտնականների մոտեցումները, միասնական են այն առումով, որ կարեռում են ժողովուրդների ազգամշակութային և լեզվամշակութային առանձնահատկությունները: Պարզ է՝ որքան հարուստ լինի լեզվի բառային կազմը և բազմիմաստ, այնքան մեծ կիහնեն դարձվածքներ կազմելու հնարավորությունները: Եվ պատահական չէ, որ ֆրանսիական «Լարու» հեղինակավոր բառարանում Պ. Բեղիրյանի, Խ. Բաղիկյանի և այլոց ուշադրությունը գրավում են դարձվածքի ֆրանսերեն սահմանման այն հատվածները, որը վերջինս դիտարկվում է որպես «ազգին հատուկ լեզվական միավոր», «մի արտահայտություն կամ կառույց, որ հատուկ է որևէ լեզվի»: Այս ձևակերպումները ցույց են տախս, թե որքան կարևոր է լեզվամշակութային գործոնի դերը դարձվածքների ընկալման հարցում:

Լիարժե՞ք են դարձվածքների այս ձևակերպումները, թե՞ ոչ: Խ. Բաղիկյանի ծշմարիտ համոզմամբ՝ դարձվածքները ճշգրիտ բնութագրելու համար, պետք է հատակորեն գիտակցել դրանց հատկանիշներն ու առանձնահատկությունները: Որպես ամենակարևոր հատկանիշ նա համարում է դարձվածքների անմիատարր բնույթը, այսինքն մեկից ավելի բաղադրիչներով կազմված լինելը /Բաղիկյան, 1986: 43/: Օրինակ՝ գլուխ դնել (երկու բաղադրիչ), ճոկը գլուխ է հոտում (երեք բաղադրիչ) և այլն:

Ըստ Բաղիկյանի կարևոր հատկանիշ է նաև «խոսքաշարային միջավայրը», «դարձվածքի շրջապատը», երբ բառերը մի դեպքում կարող են հանդես գալ իրենց սովորական իմաստով, իսկ մեկ այլ խոսքային միջավայրում նույն բառերը միևնույն հերթականությամբ, քերականական ու շարահյուսական նույն ձևով կարող են իմաստափոխվել: Մյուս առանձնահատկություններից նշվում է նաև դարձվածքների պատրաստի կառույց լինելը: Դրանք չեն առաջանում

խոսելու ընթացքում, այլ օգտագործվում են արդեն գոյություն ունեցողները փոխարեական առումով: Կարևոր է համարվում նաև դարձվածքների բաղադրիչների անտարրալուծելիությունը, այսինքն կայունությունը:

Այս առանձնահատկությունները նշելուց հետո Խ. Քաղիկյանը տալիս է դարձվածքի սահմաննան իր բանաձևումը. «Երկու կամ ավելի բառերից կազմված պատկերավոր գաղափար կամ հասկացություն արտահայտող վերահմաստավորված և վերարտադրելի կայուն բառակապակցությունը կոչվում է դարձվածք կամ դարձվածային միավոր» /Քաղիկյան, 1986: 89/:

Դարձվածքներն ունեն իրենց տեսակները: Դրանք բաժանվում են չորս հիմնական խմբերի: Ի դեպ, այս դասակարգումը, որ ընկած է գրեթե բոլոր լեզուների դարձվածաբանության հիմքում, կազմված է Շ. Քալիկի տեսության հիման վրա և հաշվի է առնում դարձվածքի բաղադրիչների ձուլվածության աստիճանը, որ գոյություն ունի նրա ընդհանուր իմաստի և բաղադրիչների իմաստների միջև:

**1. Դարձվածային միակցություններ (սերտաճումներ):** Այստեղ ամենակարևոր հատկանիշը իմաստային ամենաբարձր մակարդակի ձուլվածությունն է: Կարևոր նշանակություն ունի բառերի վերահմաստավորումը, առանց որի դարձվածք հասկացություն չի կարող գոյություն ունենալ: Այս տիպի դարձվածքների բոլոր բաղադրիչներն ել վերահմաստավորիչների արտահայտած սովորական իմաստներից:

Օրինակներ՝

Ֆրանսերենում

*vivre de l'air du temps – n'avoir aucune ressource,*

*passer l'arme à gauche – mourir,*

*renvoyer l'ascenseur – répondre à un acte, généralement obligeant, par un acte de même nature,*

*faire l'autruche – refuser de voir la vérité,*

*avaler des couleuvres – supporter des affronts, des avanies, sans pouvoir se plaindre,*

*prendre en grippe – concevoir de l'aversion ou de l'hostilité pour qch ou qn:*

Հայերենում

գլոխ տալ, երես դարձնել, քամուն տալ, մեջք ծոել, բանք բանից անցավ, փորորիկ մի բաժակ ջրում, դանակը ուկորին է հասել, կարապի երգ և այլն:

**2. Դարձվածային միասնություններ:** Սրանք դարձվածքների այն տեսակն են, որ թեև իմաստաբանորեն անբաժան են, բայց պակաս միաձույլ են, քան սերտաճումները: Դարձվածային միասնության բաղադրիչներից որևէ մեկը ինչ-որ չափով պահում է իր իմաստը, որի պատճառով էլ դարձվածքի ամբողջական իմաստը ինչ-որ չափով կախված է լինում դարձվածքի բաղադրիչներից: Այն արտահայտվում է թե՛ բառակապակցությունների, թե՛ նախադասությունների ձևով:

Օրինակներ՝

### **Ֆրանսերենում**

Mordre à l'appât, l'affaire est dans le sac, prendre la balle au bond, la bête noire de quelqu'un, les absents ont toujours tort և այլն:

### **Հայերենում**

Օձի լեզու բավել, քար կտրել, կրակի գին, խելքի սոսարակ, լեզու կաս ընկնել, խոսքը կտորը զցել, ջրի գին և այլն:

**3. Դարձվածային կապակցություններ:** Սրանք դարձվածային այն միավորներն են, որոնց բաղադրիչների բառային իմաստներից է բխում դարձվածքի ընդհանուր իմաստը: Սրանցում ավելի բույլ են իմաստային կապերը: Սրանց հիմնական առանձնահատկությունն այն է, որ թեև դարձվածքի բաղադրիչները կայուն են և ունեն իմաստային ինքնուրույնություն, իրենց կապերով մնում են կախյալ վիճակում:

Օրինակներ՝

### **Ֆրանսերենում**

Désirer ardemment, aimer éperdument, accepter un cadeau, adopter une résolution,

որոճում հոմանիշ բառերը չեն կարող փոխարինվել մեկը մյուսով:

### **Հայերենում**

Սեղրը բավել, դառը դատել, հոճերը կիտել, նորը հարց, քիթը տրորել, կյանքի ընկեր և այլն:

Հարկ է նշել սակայն, որ դարձվածային միասնությունների և դարձվածային կապակցությունների միջև սահմանները միշտ չեն, որ հստակ են ու որոշակի:

**4. Դարձվածային արտահայտություններ:** Դարձվածային արտահայտություններ են կոչվում այն միավորները, որոնք կազմված են ազատ իմաստ ունեցող բառերից: Դրանց մեջ են մտնում առած-ասացվածքային արտահայտությունները, թևավոր խոսքերը, հեղինակային դիպուկ արտահայտությունները և այլն:

Օրինակներ՝

### **Ֆրանսերենում**

Chien vivant vaut mieux que lion mort, il ne faut pas jouer avec le feu, il n'y a pas de roses sans épines, l'appétit vient en mangeant, chacun prend son plaisir où il le trouve, և այլն:

### **Հայերենում**

Բարին ընդ ծեղ, լինել թե ցինել, ուկե միջակություն, խնձորը ծառից հեռու չի ընկնի, լավ է ուշ, քան երբեք, և այլն:

Դարձվածքների մանրամասն ու ճշգրիտ հետազոտման և իմաստային ու կառուցվածքային հատկանիշների ուսումնամիտության արդյունքում լեզվաբաններից շատերը եկել են այն եզրակացության, որ միայն «դարձվածային սերտաճումներն» ու «դարձվածային միասնությունները» կարող են բուն դարձվածքներ համարվել, իսկ «դարձվածային կապակցություններն» ու «դարձվածային արտահայտությունները» դարձվածքներ չեն, քանի որ դարձ-

վածքները թեև կայուն կապակցություններ են, սակայն ոչ բոլոր կայուն բառակապակցություններն են դարձվածներ: Նրանք ժխտում են «դարձվածյին արտահայտություն» հասկացությունը որպես դարձվածքի տեսակ, իսկ «դարձվածյին կապակցություն» հասկացությունն էլ համարում են ոչ լիարժեք, քանի որ բաղադրիչներն այնքան թույլ են կապված միմյանց, որ հեշտորեն կարելի է այդ կապը տարրապուծել:

Ժե ինչպես են առաջացել դարձվածքները, հիմա արդեն այնքան էլ դժվար չեն որոշելլ: Տրամաբանությունը հուշում է, որ այն չեր կարող առաջանալ խոսքի գարգացման նախնական փուլում: Խոսքի զարգացումը բազմաստիճան երևույթ է, և դրա զարգացման առաջին աստիճանում մարդիկ խոսքի մեջ դրել են իրենց ամենօրյա կարիքները արտահայտող հասկացություններ: Պարզ է, որ խոսքի զարգացման նախնական աստիճանում բառերը եղել են մենիմաստ, ուստի մարդու մտածողության զարգացման և բավարար կենսափորձ ունենալուց հետո է հնարավոր եղել գիտակցել առարկաները, հատկանիշները, քանակը, իսկ ավելի ուշ՝ հարաբերությունները, երևույթները, զգացումները և այլն:

Լեզվի զարգացման որոշակի աստիճանում գոյացել են հարադիր բառերը, կայուն բառակապակցությունները, սակայն դեռևս չեն գիտակցվել դարձվածքները, քանի որ բառերի իմաստափոխված ձևերը կիրառելի չեն եղել: Իրավացի է Խ. Բաղիկյանը, երբ գրում է. «...մինչև մարդը չիմանար ձուկ, գլուխ, բռնել բառերն ու դրանց իսկական իմաստները, չեր կարող ստեղծել ձուկը զիսից բռնել դարձվածքը, որն արդեն նշանակում է ոչ թե բաղադրիչ բառերի գուգորդումից ենթադրվող ուղղակի իմաստ, այլ՝ մտածված, խելացի վարվել» /Բաղիկյան, 1986: 47-48/:

Դարձվածքները, ինչպես նշել ենք, մեծ մասամբ ունեն ժողովրդական ծագում, ստեղծվել են բանավոր խոսքում և հետո են անցել գրական լեզվին և ստեղծվել նաև նրանում: Բացի լեզվական գործոններից, կան նաև արտալեզվական գործոններ, որոնք ևս մեծ չափով նպաստում են դարձվածքների առաջացմանը և ունեն առավելապես տեղային բնույթ: Բնական պայմանները, բնությունը, տեղանքը նպաստում են այնպիսի դարձվածքների գոյացմանը, որոնք համապատասխանում են տեղի բնական պայմաններին: Այնտեղ, որտեղ երկիրը անտառապատ է, շատ են անտառների, ծառերի, կենդանիների, որսորդների մասին դարձվածքները, իսկ, ասենք, լեռնային կլիմա ունեցող երկրներում շատ են բարձունքների, քարերի և բնական այդ միջավայրին համապատասխան այլևայլ դարձվածքները: Արտաքին գործոններ են նաև ժողովուրդների պատճական անցյալը, նրանց հոգեբանությունը, կրոնը և այլն:

Ինչպես արդեն նշեցինք դարձվածքները բառի և հատկապես հարաբերությունների հետ ունեն որոշակի հարաբերություններ: Բառերը մեծ մասամբ կարող են բարգմանել, վերարտադրել դարձվածքները, բայց դարձվածք դառնալ չեն կարող այն պարզ պատճառով, որ դարձվածքները ոչ թե միատարր, այլ տարակազմ կառույցներ են: Եթե դարձվածքը ձևակերպվում է ֆրանսերենում à la dérobée – բառակապակցությամբ, ապա բառային համարժեքը կլինի *secrètement, furtivement*.

Հայերենում՝ «Լուն ուղտ դարձնել» - չափազանցել:

Այլ են հարադրությունները: Թե՛ ձևով, թե՛ իմաստով դարձվածքները շատ են նման հարադրություններին և հաճախ նույնանում են նրանց հետ: Օրինակներ՝

Faire face, mettre en cause, prendre conscience, donner raison,և այլն:

Սեղը ծուլ, լեզու բափել, աչքի պոչով նայել, և այլն:

Տարբեր են դարձվածքների հարաբերությունները սովորական կայուն բառակապակցությունների հետ: Բավական դժվար է դրանք տարբերակել կայուն բառակապակցություններից, նախ այն պատճառով, որ երկուսն էլ կառուցվածքային տեսակետից նույնն են, այսինքն՝ կայուն կապակցություններ են:

Ակնհայտ են տարբերությունները, որոնց պատճառով բոլոր բառակապակցությունները չենք կարող դարձվածքներ անվանել: Ոչ դարձվածային բառակապակցությունների իմաստները, հակառակ դարձվածքների, կազմվում են բաղադրիչների արտահայտած իմաստներից:

Ոչ դարձվածային կայուն բառակապակցության գերադաս անդամին լրացնող բաղադրիչները փոփոխական են, որի հետևանքով կարելի է ստանալ մեկ ուրիշ կայուն միավոր:

*Direction financière (ֆինանսների վարչություն) direction de qualité (վերահսկման վարչություն)*

Հմտ. հայերենում՝

**Վիրարուժական բաժին** կայուն բառակապակցության վիրարուժական բաղադրիչը փոխելով, կարող ենք ստանալ **սրտաբանական բաժին**, **թերապևտիկ բաժին**, **ուռուցքաբանության բաժին** և այլն, որոնք նույնքան կայուն են որքան վիրարուժական բաժինը:

Կայուն բառակապակցությունները անվանական են կամ բայական, իսկ դարձվածքները կարող են լինել անվանական, բայական, ածականական, մակրայական և այլն: Առաջինները չունեն փոխարերական իմաստ, իսկ դարձվածքները օժտված են փոխարերականությամբ և պատկանում են լեզվի պատկերավոր միջոցների թվին:

Եթե դարձվածքները որոշակի հարաբերությունների մեջ են գտնվում հատկաբանությունների, բառերի, հարադրությունների ու բառակապակցությունների հետ, ապա սահմանազատվում են առածներից, ասացվածքներից, անեծքներից ու օրինանքներից, թևավոր խոսքերից:

Բանագիտական գրականության մեջ առածները բնութագրվում են որպես «ուղղակի և փոխարերական իմաստ ունեցող կարճ, պատկերավոր ասույթներ ու դատողություններ» /Գրիգորյան, 1980: 302/: Դրանք նույնքան հին են որքան դարձվածքները և ունեն պատմաճամանաշողական, սոցիալ-բաղադրական ու գեղագիտական նշանակություն:

Ընդունելով դրանց նմանությունները, այն, որ երկուսն էլ պատկերավոր արտահայտություններ են, մեծ մասամբ անտարրալուծելի, ունեն և՛ ճանաչողական, և՛ իմացական արժեք, կուռ են, սեղմ և այլն, հարկ է նշել, որ տարբերվում են այնպիսի կարեւոր հատկանիշով, ինչպիսին է ստորոգական ձևավորվածությունը: Բացի դրանց առածները հիմնականում ունեն հաղորդակցական արժեք և քերն են, որ ունեն անվանողական արժեք:

Դարձվածքներն իրենց քերականական, իմաստաբանական ամուր կապի շնորհիվ շարահյուսորեն ավելի կուռ են, համարյա անխախտելի, քան առածները, որոնք շարահյուսորեն ոչ այնքան կայուն են և հնարավոր է դրանք տարրալութել: Օրինակ՝

*Qui ne dit mot consent (լուրջունը համաձայնության նշան է), à quelque chose malheur est bon (չկա շարիք առանց քարիքի), l'habit ne fait pas le moine (ամեն սև հազնող քահանա չէ), qui trop embrasse mal étreint (շատի ետևից լընկնողը քիչն էլ կվորցնի) և այլն:*

Դարձվածքներն, ունենալով ավելի կուռ կառուցվածք, բնականաբար, ավելի կայուն վերահմաստավորվածություն ունեն, քան առածները: Դարձվածքների գորեք բոլոր բաղադրիչները վերահմաստավորվում են և արտահայտում նոր իմաստներ, իսկ առածների բաղադրիչներից մեկը, կամ եթե այն ծավալուն է, մի քանիսը պահում են իրենց սովորական իմաստները, և նշում տվյալ փաստը, առարկան, կամ երևույթը: Ինչ վերաբերում է ասացվածքներին, դրանք ոչ մի կապ չունեն դարձվածքների հետ հենց այն պատճառով, որ արտահայտում են ոչ թե փոխաբերական կամ այլաբանական, այլ ուղղակի իմաստ, իսկ դարձվածքները, ինչպես արդեն նշեցինք, վերահմաստավորված արտահայտություններ են և կապ չունեն սովորական, ուղղակի իմաստ արտահայտող ասացվածքների հետ:

Օրինակ՝

*Les bons comptes font les bons amis (բարեկամությունը՝ բարեկամություն, հաշիվը՝ հաշիվ), tel père, tel fils (սղեն հորը կրաշի), և այլն:*

*Հմմտ. հայերենում՝*

*Ով որ դատի, մա էլ կուտի, բունը բուն կրերի* և այլն:

Դարձվածքները սահմանազատվում են նաև թեավոր խոսքերից: Թեավոր խոսքեր ասելով հասկանում ենք լեզվի դիպուկ, սրամիտ, խորիմաստ ու պատկերավոր այն արտահայտությունները, որ ստեղծվել են ժողովրդի կամ առանձին անհատների կողմից և գործածվել վաղուց ի վեր: Դրանք ունեն ոչ միայն խրատական, այլև կրթադաստիարակչական նշանակություն: Առածների, անեծքների, օրինանքների նման թեավոր խոսքերի բաղադրիչները ևս ավելի թոյլ կապերով են կապված: Մրանք զուգորդվում են այն տեքստերի հետ, որոնցից սերում են և ունեն պատճական ժամանակաշրջանը նշելու յուրահատկություն: Սոլոմոն թագավորի *Երգ-Երգոց-ը* հեթանոսական ժամանակաշրջանն է հիշեցնում (Նոր կտակարան), աչքն է մարմնի ճրագը; *ով լսելու ականջ ունի, բռու լսի; երանի հոգով աղքատներին արտահայտությունները լսելիս հասկանում ենք, որ աստվածաշնչյան տողեր են:* *Մասի ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն;* լավ է կույր լինել աշոր, քան կույր՝ մտոր Եղիշեի խոսքերը հինգերորդ դար են տանում մեզ: *Լինել թէ չլինել-ը Շեքսպիրին է հիշեցնում, Պանուրզի ոչխար մի լինի՝ Ֆրանսուա Ռաբլեին (15-րդ դար), կրակից շազանակներ հանել՝ Լաֆոնտենին (17-րդ դար), Փոքորիկ մի բաժակ ջրում՝ Մոնտեսպյոյին (18-րդ դար), քիչ ենք, քայց հայ ենք՝ Պ. Սևակին (20-րդ դար):*

Դարձվածքի և թեավոր խոսքի տարբերությունները հստակ նշում է Պ. Բեդիրյանը իր «հայերենի թեավոր խոսքեր» բառարանի առաջաբանում:

«Այդ եզրով անվանվող լեզվական միավորները սովորական դարձվածների հետ ընդհանուր գծեր ունեն, սակայն նի քանի հատկություններով դրանցից դարձերվում են:

Նախ դարձվածների ծագումն ավելի քան 90 տոկոսով անհայտ է, իսկ թևավոր խոսքերը ծագումով հայտնի են. դրանք գալիս են այս կամ այն գրական, պատմական և այլն աղբյուրից:

Երկրորդ՝ այդ միավորները տարբերվում են իրենց կառուցվածքով. դարձվածների ճնշող մեծամասնությունը բառակապակցություններ են, իսկ թևավոր խոսքերը՝ նախադասություններ:

Երրորդ՝ դարձվածները հիմնականում հասկացություններ են արտահայտում, իսկ թևավոր խոսքերը մեծ մասամբ դատողություններ:

Չորրորդ՝ թևավոր խոսքերը, որպես կանոն, բնագրի իմաստի, մտքի կնիքն են կրում, նրա իմաստային ու ոճական երանգն են պահում» /Բեղիբյան, 2007: 5/:

Այսպիսով՝ «դարձվածաբանական միավորներ» հասկացությունը մեր կողմից ընկալվում ու մեկնաբանվում է որպես սովորական բառամիավորներից տարբերվող և ուրույն հատկանիշներով օժտված լեզվական արտահայտչամիջոցների ամբողջություն, առանց որոնց մեր խոսքը կվերածվեր միապահաղ ու տաղտկալի բառակույտի:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք» հրատարակչություն, 1965:
2. Այտընյան Ա. Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, Միխրարենց տպարան, 1866:
3. Բաղիկյան Խ. Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, ԳԱ հրատարակչություն, 1986:
4. Բեղիբյան Պ. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1973:
5. Գևորգյան Ե. Հայերենի դարձվածները, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1969:
6. Գրիգորյան Գ. Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980:
7. Մուրվալյան Ա. Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, ԳԱ հրատարակչություն, 1959:
8. Զահոնյան Գ. Աղայան Է.Բ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա., Հայոց լեզու, I մաս, Ա. պրակ, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980:
9. Շանսկի Ի.Մ. Фразеология современного русского языка. Москва: «Высшая школа», 1969.
10. Виноградов В.В. Об основных типах фразеологических единиц в русском языке. Сборник статей и материалов. М.-Л.: АН СССР, 1947.
11. Назарян А.Т. Фразеология современного французского языка. Москва: «Высшая школа», 1987.
12. Bernard G. Les locutions verbales françaises // *La linguistique*, 10-2, 1974.

13. Guiraud P. Les locutions françaises. Que sais-je ? Paris: Presses universitaires de France, 1967.
14. Lamiroy B. et autres, Les locutions verbales figées de la francophonie. Paris: Ophrys, 2010.

## ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Բեղիրյան Պ. Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011:
2. Բեղիրյան Պ. Հայերենի թևավոր խոսքեր, հեղինակային հրատարակչություն, Երևան, 2007:
3. Ուսու-հայերեն դարձվածաբանական բառարան (կազմ.՝ Ո. Սելրումյան, Պ. Պողոսյան և այլք), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1975:
4. Սովիասյան Ա., Գալստյան Ս. Հայոց լեզվի դարձվածաբանական բառան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1975:
5. Le Petit Larousse illustré, Paris, 2011.
6. Le Nouveau Petit Robert, Paris, 2003.
7. Alain Rey et Sophie Chantreau. Dictionnaire des expressions et locutions, Le Robert, Paris, 1997.

**III. ПЕТРОСЯН – Сущность понятия «фразеологическая единица» и ее типы.** – В статье автор представляет свое понимание понятия «фразеологическая единица», согласно которому вводится различие между понятиями «фразеологизм» и «фразеологическая единица». Выделяется особое место фразеологизма среди других фразеологических единиц – поговорок, пословиц, крылатых слов, пожеланий и благословений. Такой подход опирается на то, что каждый из упомянутых языковых единиц в той или иной мере наделен образностью, переносно-аллегорическим значением, эмоциональной окрашенностью и оттенками выразительности.

**Ключевые слова:** фразеологизм, фразеологическая единица, образность, переносно-аллегорическое значение, эмоциональный оттенок, выразительность

**Sh. PETROSYAN – The Nature and Types of Phraseological Units.** – The paper presents the author's understanding of the concept “phraseological unit”. Accordingly a distinction is made between the terms “a phrase” and a “phraseological unit”. A special attention is paid to the place of the phrase among other phraseological units such as proverbs, sayings, aphorisms, wishes and blessings. This approach relies on the fact that each of these lexical units is characterized by figurativeness, metaphorical-allegorical meaning, emotional-sensory nuances, and expressiveness to some extent.

**Key words:** a phrase, phraseological unit, figurativeness, metaphorical-allegorical meaning, emotional-sensory nuance, expressiveness